Հավելված

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
«-------» ----------2019թ.
թիվ _____ - Ա հրամանի

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի /այսուհետ՝ ուսումնական կենտրոն/ կանոնադրությունը սահմանում է ուսումնական կենտրոնի գործունեության խնդիրներն ու նպատակները, կառավարումը, կառուցվածքը, աշխատողների ու սովորողների գործունեությունը, ինչպես նաև կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը:

2. Ուսումնական կենտրոնը կազմակերպում և իրականացնում է՝

ա/ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկան» որակավորման դասընթացներ,

բ/ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման դասընթացներ,

գ/ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների հատուկ պատրաստականության դասընթացներ,

դ/ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության 0103 «Պահնորդական գործ» մասնագիտության «Պահնորդ» որակավորման դասընթացներ,

ե/ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության 0102 «Թիկնապահական գործ» մասնագիտության «Թիկնապահ» որակավորման դասընթացներ:

3. Ուսումնական կենտրոնի լրիվ անվանումն է.

- հայերեն՝ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոն»,
- ռուսերեն՝ «Учебный центр образовательного комплекса полиции Республики Армения»,
- անգլերեն՝ «Training Center of the Educational Complex of Police of the Republic of Armenia»:

4. Ուսումնական կենտրոնի հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Իսակովի պողոտա 29:

II . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Ուսումնական կենտրոնի խնդիրներն ու նպատակները՝

ա/ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան մասնագիտական կրթություն և որակավորում ստանալու՝ անհատի պահանջմունքի բավարարումը:

բ/ Վերապատրաստում անցնող ոստիկանության ծառայողների, մասնագիտական դասընթաց անցնող սովորողների զարգացման և նրանց ընդհանուր պատրաստվածության մակարդակի բարձրացման ապահովումը:

գ/ Դասընթացի տրամաբանորեն ճիշտ կառուցված, մեթոդական դասավանդման համատեղումն ու հաջորդականությունը, ուսումնական գործընթացի պարբերականությունը:

դ/ Ուսումնական գործընթացում գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների, ոստիկանության և այլ պետությունների համապատասխան ծառայությունների գործնական փորձի ներդրումը:

ե/ Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մանկավարժական գործունեության և սովորողների կողմից մասնագիտական ուսումնական ծրագրերի յուրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

6. Ուսումնական գործընթացի կազմակերպումը նպատակ ունի ապահովելու տեսական և գործնական ուսուցման հավասար հարաբերակցությունը:

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Ուսումնական կենտրոնի ղեկավարումն իրականացնում է ուսումնական կենտրոնի պետը՝ անձամբ և իր տեղակալի միջոցով և անմիջական ենթարկվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետին:

8. Ուսումնական կենտրոնի պետը՝

ա/ պատասխանատվություն է կրում ուսումնական կենտրոնի ամենօրյա գործունեության համար, ղեկավարում և կազմակերպում է ուսումնական կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը:

բ/ Հսկողություն է իրականացնում ուսումնական գործընթացի իրականացման, ուսումնական կենտրոնի տեխնիկական միջոցների, գույքի նպատակային շահագործման նկատմամբ:

գ/ Ապահովում է ՀՀ ոստիկանության ղեկավարության, ինչպես նաև ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանների, հրահանգների, ցուցումների և հանձնարարականների կատարումը, վերահսկողություն է սահմանում դրանց պատշաճ և ժամանակին կատարման նկատմամբ:

դ/ Հսկողություն է իրականացնում ուսումնական կենտրոնի գործավարությունը կարգավորող հրամանների պահանջների կատարման նկատմամբ:

ե/ Սահմանված կարգով առաջարկություններ և միջնորդություններ է ներկայացնում կրթահամալիրի պետին՝ ուսումնական կենտրոնի գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նշանակման, առաջխաղացման, ինչպես նաև խրախուսման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին:

զ/ Կազմակերպում և ղեկավարում է ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնադաստիարակչական աշխատանքները:

է/ Հսկողություն է իրականացնում կրթաճյուղերի և նախնական մասնագիտական պատրաստականության բաժանմունքի աշխատանքների կազմակերպման նկատմամբ:

9. Ուսումնական կենտրոնի պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է ուսումնական կենտրոնի պետի տեղակալը:

10. Ուսումնական կենտրոնի խորհուրդը /այսուհետև՝ խորհուրդ/ ուսումնական կենտրոնի պետին առընթեր խորհրդակցական մարմին է, որի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է ուսումնական կենտրոնի պետը:

11. Խորհրդի կազմն ու աշխատակարգը հաստատում է կրթահամալիրի պետը:

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Ուսումնական կենտրոնի գործունեությունն իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

13. Ուսումնական կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղը, «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղը և նախնական մասնագիտական պատրաստականության բաժանմունքը:

14. Ուսումնական գործընթացը կազմակերպում է ուսումնական կենտրոնի պետի տեղակալը:

15. Ուսումնական կենտրոնի պետի տեղակալը՝

ա/ ուսումնասիրում և կիրառության մեջ է դնում ուսումնական գործընթացը կարգավորող անհրաժեշտ փաստաթղթերը:

բ/ Իրականացնում է վերահսկողություն առարկայական թեմատիկ պլանների /ծրագրերի/, առարկայական թեմաներից բխող պլան-կոնսպեկտների, առարկաների հարցաշարերի մշակման գործընթացի նկատմամբ:

գ/ Մասնակցում է ՀՀ ոստիկանության կադրերի վարչության կողմից կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման տարեկան /եռամսյակային/ պլան-գրաֆիկների կազմման աշխատանքներին:

դ/ Կիսամյակի և տարվա կտրվածքով կազմում և ուսումնական կենտրոնի պետին է ներկայացնում հաշվետվություն կրթաճյուղերի, նախնական մասնագիտական պատրաստականության բաժանմունքի կատարած աշխատանքների վերաբերյալ:

ե/ Առաջարկություններ է ներկայացնում ուսումնական կենտրոնի պետին՝ ուսումնական գործընթացին գիտական և ուսումնական այլ հաստատությունների փորձառու մասնագետների ներգրավման ուղղությամբ:

զ/ Կազմակերպում և իրականացնում է ծառայողական, մարտական և ֆիզիկական պատրաստականության պարապմունքների անցկացումը:

է/ Հսկողություն է իրականացնում դասախոսահրամանատարական կազմի, սովորողների, քաղաքացիական աշխատանք իրականացնող անձանց կողմից գործառութային պարտականությունների կատարման նկատմամբ:

16. Ուսումնական կենտրոնի ուսումնամեթոդական գործընթացի կազմակերպման հիմնական ստորաբաժանումը կրթաճյուղն է, որը միավորում է մասնագիտական ուղղվածություն ունեցող կամ ընդհանուր պատրաստականություն ապահովող առարկաներ: Կրթաճյուղում իրականացվում են ուսումնամեթոդական, ուսումնադաստիարակչական, դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Կրթաճյուղում իրականացվող աշխատանքները քննարկվում են կրթաճյուղի նիստում:

17. Կրթաճյուղի աշխատանքները ղեկավարում է կրթաճյուղի պետը:

18. Կրթաճյուղի պետը՝

ա/ ապահովում է նախատեսված դասախոսությունների, սեմինարների, գործնական պարապմունքների անցկացումը և արդյունքների, ստուգարքների, դիֆերենցված ստուգարքների ընդունման ու վերահանձնման գործընթացը:

բ/ Կազմակերպում, ամփոփում և քննարկման է ներկայացնում կրթաճյուղի դասախոսական անձնակազմի կողմից իրականացվող ուսումնամեթոդական, ուսումնադաստիարակչական աշխատանքները:

գ/ Ապահովում է դասախոսների կողմից առարկայական թեմատիկ պլանների /ծրագրերի/, առարկայական առանձին թեմաների պլան-կոնսպեկտների, դիդակտիկ նյութերի, դասավանդման տարբեր մեթոդների, ինչպես նաև մեթոդական աշխատանքների մշակումը և դրանց կիրառումը:

դ/ Ուսումնասիրում և վերահսկում է ուսումնական պարապմունքների ընթացքում տեսական, մեթոդական և ուսումնանյութական բազայի ապահովվածությունը:

ե/ Ապահովում է կրթաճյուղում կազմակերպվող ցուցադրական, բաց, փորձնական պարապմունքների անցկացումը և իրականացնում արդյունքների ամփոփում:

գ/ Ապահովում է կրթաճյուղի դասախոսական կազմի կողմից կատարվող ուսումնական, ուսումնամեթոդական աշխատանքների համար պահանջվող ժամանակի պլանավորման և հաշվառման նորմերի հավասարաչափ բաշխումը:

19. Կրթաճյուղի պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է իր կրթաճյուղի ավագ դասախոսի պաշտոն զբաղեցնող ծառայողներից մեկը:

20. Նախնական մասնագիտական պատրաստականության բաժանմունքն ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծված կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմակերպում և իրականացնում է ուսումնական գործընթացին վերաբերող փաստաթղթային վարման աշխատանքները:

21. Նախնական մասնագիտական պատրաստականության բաժանմունքը՝

ա/ նախապատրաստում և պլանավորում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

բ/ Իրականացնում է ուսումնական գործընթացի պլանավորման և հաշվառման փաստաթղթերի վարումը:

գ/ Իրականացնում է ուսումնական կենտրոն գործուղված ծառայողների գրանցման-հաշվառման և դասընթացների ավարտից հետո համապատասխան վկայականների լրացման գործընթացները:

22. Նախնական մասնագիտական պատրաստականության բաժանմունքի գործառույթների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է նախնական մասնագիտական պատրաստականության բաժանմունքի պետը:

23. Նախնական մասնագիտական պատրաստականության բաժանմունքի պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է այդ բաժանմունքի ավագ տեսուչի պաշտոն զբաղեցնող ծառայողներից մեկը:

V. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏՈՂԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

24. Ուսումնական կենտրոնի աշխատողներն են՝ ոստիկանության ծառայողները, աշխատանքային պայմանագրով աշխատողները, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք իրականացնող անձինք:

25. Ուսումնական կենտրոնի դասախոսական կազմը կազմակերպում և իրականացնում է՝

ա/ մասնագիտական գործունեության հետ կապված ուսումնամեթոդական, ուսումնադաստիարակչական աշխատանքները:

բ/ Կրթական չափորոշիչներին համապատասխան ինքնուրույն ընտրում է դասավանդման մեթոդների, դասընթացի բովանդակության, պարապմունքների անցկացման ձևերը:

գ/ Սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում ուսման որակի բարձրացման և կատարելագործման ուղղությամբ:

դ/ Սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների ամրապնդման նպատակով իրականացնում է լրացուցիչ պարապմունքներ:

ե/ Աջակցում և մասնակցում է ուսումնական պարապմունքների տեսական և մեթոդական մակարդակի բարձրացմանը և կատարելագործմանը:

զ/ Ապահովում է ուսումնական գործընթացում նոր ինտերակտիվ մեթոդների կիրառումը, ծանոթանում է նորագույն տեխնիկայի կիրառման մեթոդիկային:

26. Ուսումնական կենտրոնի սովորողներն են՝ ՀՀ ոստիկանության պետի կամ նրա տեղակալի հրամանով վերապատրաստման դասընթացների գործուղված ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները և նախնական մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկան» որակավորում ստացող սովորողները:

27. Ուսումնական կենտրոնում դասընթացներ են անցնում հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցները, «Պահնորդական գործ» մասնագիտության «Պահնորդ» որակավորման դասընթացներ և «Թիկնապահական գործ» մասնագիտության «Թիկնապահ» որակավորման դասընթացներ անցնող անձինք:

28. Ուսումնական կենտրոնի աշխատողների և սովորողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՀ ոստիկանության պետի կողմից ընդունված իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, ուսումնական կենտրոնում ուսումնական գործընթացի կազմակերպման կարգով:

29. Ուսումնական կենտրոնի սովորողներն իրավունք ունեն՝

ա/ օգտվելու մասնագիտացված լսարաններից, կրթահամալիրի գրադարանից, մարզական, մշակութային և հանրակացարանային համալիրից:

բ/ Ներկայացնել առաջարկություններ ուսումնական գործընթացի, հանգստի կազմակերպման, կենցաղային պայմանների բարելավման վերաբերյալ:

գ/ Մասնակցել կրթահամալիրում կազմակերպվող մշակութային և սպորտային միջոցառումներին:

30. Ուսումնական կենտրոնի սովորողը պարտավոր է՝

ա/ պահպանել ծառայողական կարգապահությունը և կատարել ղեկավարների հրամանները:

բ/ Հաճախել կրթահամալիրում կազմակերպվող ուսումնական պարապմունքներին, սահմանված ժամկետներում կատարել թեմատիկ պլաններով /ծրագրերով/ նախատեսված ուսումնական առաջադրանքները, հանձնել ստուգարքներ և դիֆերենցված ստուգարքներ:

գ/ Պահպանել ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները:

դ/ Ուսումնառության ընթացքում ընդգրկվել կրթահամալիրում կազմակերպվող շուրջօրյա վերակարգի ծառայությանը: